Ստրպետ

Շխնոց

8

Անցավ տասնևհինգ օր, անցավ և ամիս, բայց Վարդևանն ու Մանուկը իրենց զավակների տեղը չիմացան: Եթե ձեռքերում մի քանի սև փող էր ընկնում, ախոռներում գառից, հորթից և հավից ինչ էլ որ ունեին, ծախում էին և փողը փոստի, հեռագրի և մասնավոր անհատների վրա ծախսելով, անցկացնում էին օրերը: Սառնամանիքը օրեցօր սաստկանում էր, բուքն ու թիփին չէին կտրվում, սրանց հետ միասին չունևորությունը տանջում էր գյուղականին: Արդեն երեք ամսից ավելի էր, որ ո՛չ մի փարա փող, ոչ էլ նամակ էին ստացել Գեղևոնից ու Մելքոնից:

Բավական չէր, որ քաղցից ու բքից տանջվում էին Վարդևանն ու հարանը, մանր պարտատերերն էլ նրանց դադարումը կտրել էին: Օր չէր անցնիլ, որ հինգ-տասը մարդ չկտրեր նրանց դուռը և փող չպահանջեր: Էլ ո՛չ պատիվ էր մնացել, ո՛չ էլ երեսի ջուր, խոսքի էլ հավատ չէին ընծայում, երդումի էլ, քանի որ անչափ անգամ խաբվել և միշտ դատարկաձեռն էին հեռացել պահանջատերերը Վարդևանի դռնից: Հաճախ Վարդևանը աղջկան փնտրելու պատրվակով գնում էր քաղաք մի քանի օրով, այս ու այն գլուղը, գլուխը մի կերպ պահելու պարտատերերի ձեռքից, որոնք նրան յուր տան մեջ հանգիստ չէին թողնում: Բայց ոչ մի միջոց չէր օգնում, գյուղից ձեռք չէր կարողանում քաշել, իսկ երբ վերադառնում էր, բոլոր պահանջատերերը միասին գալիս և սկսում էին իրենց պահանջներով տանջել:

Վախով ու ախով Վարդևանն անցկացրեց լուր տոները՝ ծնունդն ու մկրտությունը, չոր ու ցամաք խաշած խոտերով ու արմտիքներով կատարեցին բարիկենդանները և պահոց օրերին դիմավորեցին նվազած ու չորացած մարմնով: Թեքվեց փետրվարն էլ, և գարնանամուտն էլ հասավ, բալց ձյունները հալչելու կամք չունեին, հյուսիսի սոսկալի քամիները փչում էին դեռ և սարսռեցնում ամեն բան: Մարդիկ, անասունները իրենց որջերից, իրենց ախոռներից չէին կարողանում դուրս գալ:

Հենց ալդ օրերում հազիվ մի նամակ էր ստացել Մանուկը յուր որդուց՝ Մնացականից, որը ձեռքին շտապել էր Վարդեվանի քով՝ կարդալ տալու և մխիթարվելու հույսով: Վարդևանը վշտաբեկ և հուսահատ առավ նամակը և ծանր ու հեկեկալով հեղձուցիչ ձայնով սկսեց կարդալ: Գարանը և Մանուկի կինը՝ Մարիամը, քիչ հեռուն, մթնում կանգնած լսում էին բովանդակությունը:

«Սիրելի ծնողնե՛ր, հայրե՛ր ու մայրե՛ր:

«Մենք լսեցինք, որ դուք մեզ շատ փնտրել, շատ տրորվել և շատ էլ տանջվել եք: Լացինք ձեզ համար, ցավեցանք ու մորմոքացինք, քանի որ աշխարհում ձեզանից ավելի սիրելի, ավելի մերձավոր ցավակից և բարեկամ չենք կարող գտնել: Որքան որ դուք մեզ համար եք տանջվել, այնքան Էլ մենք ցավերով ենք տապակվել և հառաչել ձեզ համար: Այժմ սույն նամակով ձեզ դիմելով, խնդրում ենք, որ մոռանաք անցյալը, մոռանաք մեր պատճառած բոլոր սրտմաշուք կսկիծները և օրհնե՛ք մեր ամուսնությունը:

«Գյուղից հեռանալով մենք Բասենի վրայով եկանք հասանք Վարաուրդան մի օրվա մեջ, այնպես որ երկրորդ օրը առավոտյան անցնելով ռուսական սահմանը, մենք արդեն ապահովված համարեցինք մեր կյանքը: Հայրի՛կ ջան, ապրի՛, շատ ապրի մեր Ֆաթման մատյանը, նա կարծես զգում էր, որ մենք շտապում ենք փախչել ու ազատվել Շխնոցից, թուրքերից և աղաներից, փշրել մարաբայության շղթան, դրա համար էլ թռչում էր, թռչկոտում էր մինչև մեզ տեղ հասցնելը: Բայց ցավում եմ, սիրտս կտրտվում է, որ ես պարտավորվեցա այդ մատյանը ծախել Բաշ-քյոյի քեհյային և նրա գնով կաշառել տեղի տերտերներին, որ մեզ պսակեն: Առանց ձեզ մենք պսակվեցինք Բաշ-Քյո: Խնդրում ենք օրհնեցեք մեզ, ներեցե՛ք մեր կամապաշտությունը և թողություն տվեք:

«Հարյուր ռուբլով ծախեցինք Ֆաթմայիս, բայց երկու հարյուրից ավել կտային, եթե մենք անցագիր ունենայինք, վախ չունենայինք գյուղապետից: Լավ էր, այդ փողից մի քառասուն ռուբլի ետ պահեցինք, որով երեք ամիս գյուղերում գլուխներս պահելուց հետո, եկանք Ղարս և ահա քսան օր է Վարսում տուն բռնած աշխատում և ապրում ենք: Գիտեմ, հայրի՛կ, շեյխը Ֆաթմայի համար քեզ շատ է տանջելու, շատ է զրկանքների մատնելու, բայց ի՞նչ անեմ, առանց Ֆաթմայի ո՛չ կարող էի Մարգարիտիս փախցնել, ոչ էլ գլուխս պահել ճանապարհին հետևիցս ընկած ստոր զապթիեներից և քուրդ ավազակներից: Այդ ձիու գինը մեզ փրկեց, օրինական պսակին արժանացուց և այս օտար երկրում մեզ ապրուստ տվեց երեք ամիս ավելի, մեկ խոսքով՝ մեզ նորից գնեց:

«Դուք գիտեք, որ մենք ճարահատ դիմեցինք այս միջոցին, եթե դուք օրհնեիք մեր ամուսնությունը, եթե Վարդևան ապարը դեմ չկենար մեր միացման, եթե մենք մարաբայության ենթարկված չլինեինք, հայտնի բան է, այս բոլորը չէր կատարվիլ, բայց մեր վիճակը մեզ ստիպեց ոչ միայն ձեզ զայրացնել մեր փախուստով, այլև ձեզ նեղության ենթարկեք Ֆաթմայի՝ մատյանի, պատճառով: Հաշվի՛ր, հայրի՛կ, թե ինձ բաժին տվիր, տանից հեռացրիր: Լավ համոզված ես, որ ես այլևս չեմ կարող ետ դառնալ, քանի որ Վարդևան ապարը առողջ է, ես նրա աչքին երևալ չեմ համարձակվիլ: Մանավանդ որ շեյխի նման աղայի ձեռքի տակ մարաբա լինելը մեզ բնավ հաճելի չէ: Տարին տասներկու ամիս նրա համար աշխատելուց, հոգնելուց, դաղրելուց և մորմոքալուց հետո նրա և յուր տոփոտ լակոտների կրքերին զոհ դառնալու առիթներից փախչելու է…

«Ես արդեն այստեղ մտա դվնիկցի վարպետների մոտ քար տաշելու, օրական առայժմ մինչև մի ռուբլի վաստակում եմ, այնպես որ այդ փողով մենք երկուսով հանգիստ ապրելուց ջոկ, կարող ենք մի բան ետ գցել և ձեր նեղություններին էլ օգնության հասնել: Թեև այստեղ էլ գարուն չի եկել, բայց շատ գործ կա, որոնց համար քար են պատրաստել տալիս ձմեռը, տաշում և գարունը բացվելուն պես գործերը կարգի դնում:

«Ուղիղ է, այստեղ էլ աշխատում ենք ուրիշի դռանը, այստեղ էլ մեր աշխատանքից մաս ու բաժին են հանում վարպետները, վերակացուները, կապալառուները, այնպես որ մեր աշխատության գնի կեսն էլ մեզ չի հասնում,

բայց համեմատաբար այդտեղից շատ ու անչափ հանգիստ ենք և հոգիներս չի խռովում անգութ աղաների, դաժան գործակալների և դատարկապորտ ոստիկանների ներկայությամբ: Այդտեղ պարտավորված էինք դառն աշխատելուց հետո ոչ միայն չոր ու ցամաք ապրուստով զրկանքների մատնել մեր անձը, այլ մինչև անգամ լռելու, մնջելու և գլուխներս կախած հնազանդելու այն հարվածների առաջ, խոնարհվելու այն ձեռքերի տակ, որոնք մեզ տանջում էին: Այնինչ այստեղ մենք ոչ միայն մեր վաստակը ուտում, խմում, կարգին հագնվում ենք, այլ մինչև անգամ մեզ գործ հանձնողների դեմ բողոքում ենք, երբ մեզանից բան են ուզում քաշել, մեր պահանջներից, օրավարձերից զեղչել:

«Միայն ձեր կարոտն է մեզ տանջում, միայն ձեր սերն է մեզ հիշեցնում հայրենի օջախը, թե չէ մարաբայական լուծը այնպես է դառնությամբ լցրել սիրտներս ու հոգիներս, որ հավիտյան Շխնոցի անունը չէինք ցանկալ տալ, շեյխին չհիշելու համար: Մեր վերադարձին մի՛ սպասեք, մեր վզին ձեր դառնության շղթան անցկացնելու մի՛ տքնիք, ո՛չ ետ կգանք, որ ոչ էլ թուրքի, բեգի և աղայի երես տեսնենք: Հերիք է, որքան սրտերումս կուտակված մաղձը, թույնը պարտավորվել ենք փսխել ու կրկին կլանել, կուլ տալ, լռել ու համբերել: Ավելի լավ է օրականի հույսով մնալ և այս պանդխտության մեջ չարչարվիլ, գլուխ պահել, քան թե տուն դառնալ և աղայի առաջ գլուխ թեքել ու մորմոքալ:

«Գիրս մասնավորի երկար գրել տվինք, մեր վիճակը ձեզ հայտնեցինք, որ էլ ո՛չ մեզ փնտրեք, ո՛չ էլ մեր վերադարձին սպասե՛ք: Միայն ձեզանից կրկին ու կրկին խնդրում ենք, որ մեզ օրհնե՛ք, մեր արարքը մոռանա՛ք, մեզ թողություն տաք:

«Համբուրում ենք ձեզ բոլորիդ՝

Ձեր որդիքը՝ Մնացական և Մարգարիտ»:

«Հ. Գ. Գեղևոնն ու Մելքոնը Միխայլովո են աշխատում, գալողներից լուր ստացանք, որ առողջ են, հաջող և ինչ-որ կամուրջների վրա են աշխատում»:

Կարդացին ու հառաչեցին հայրերը, արտասվեցին մայրերը, և սրանց արտասուքը թրջեց իրենց կրծկալները, ողողելով իջավ գոգնոցները, թացցուց: Վարդևանը տեղ-տեղ նամակը մի քանի անգամ կարդաց, մի քանի անգամ զննեց

և վար դրեց: Մանուկը մոլորված տնքում էր և խեղդված ձայնով շրթունքների միջից դուրս մղում յուր այրված սրտից բխած հառաչանքները: Երբ ընթերցանությունը ավարտեց Վարդևանը ու վար դրեց նամակը, Գարանն ու Մարիամը հեռացան հյուրասենյակի մթությունից տան խորքերը և սկսեցին հեկեկալ:

Հիմի բան չունիմ ասելու, մրմնջաց Վարդևանը, ողջաղ տղա՛, հալալ լինի քեզ աղջիկս: Աշխատիր ու ապրեցե՛ք: Մարաբայությունից փախչողը աստծուն կմոտենա, խելքը գլխին մարդն էլ երթա ու մարաբա՞ դառնա: Բայց ի՞նչ եղան այդ անխելքները: Այդ հիմար Մելքոնը չի էլ մտածում, որ ցանքերը մոտեցան, և հայրը մենակ է, միամենակ: Ես այնքան հոգս ինչպե՞ս կարգի բերեմ մենակ: Հիմարը չի մտածում, որ յուր ամբողջ տարվան վաստակից իմ արտերս ութ-տասն անգամ ավելի կբերեն, եթե փորձանքի չենթարկվեն:

Լռեցին երկու խնամիները, և Վարդևանը սուզվեց յուր ցավերի մեջ, այնպես որ իսկույն մոռացավ աղջկան: Նրա աչքերի առաջ ներկայացան Գևորգ աղան, շեյխը, պարտատերերը, որդիքը և նա թմրած, ինչ անելիքը չէր կարողանում վճռել: Մանուկն էլ նույնպես խրված էր յուր ցավերի մեջ: Որդուց հավիտյան բաժանվելու հարցը բաց արեց նրա աչքի վրայից այն քողը, որը թույլ չէր տալիս իսկությամբ զննելու յուր վիճակը:

Խնամիները իրարից շուտով բաժանվեցան, առօրյա հացի խնդիրը, տիրող սովը, քաղցից առաջացած մորմոքը նրանց ստիպեց առժամանակ մոռանալ նույնպես իրենց սիրելիների կորուստը, որոնց մասին նամակի առթիվ քիչ փոձկացել ու լացել էին: Իսկույն նրանք ընկան այս ու այն դատարկ ամանները, ողողեցին պտուկներն ու բղուղները, ավլեցին ամբարների անկյուններն ու արանքները, որպեսզի այդ օրն էլ լցնեն իրենց անհատակ ստամոքսները, մինչև հաջորդ օրվան մի կերպ հասնելու…